գլխով ։ Նոյնպէս Ռուսաց Ընդհ. Հիւպատոսը կը պատուէ զիրենք իւր այցելութեամբը ։ և խիստ մեծ փաղաքանօք ու թախանձանօք կը խնդրէ նոյին Գերապատուութենէ իրենց ճանապարհորդութեան պատմութիւնը ։ որոյ համառօտութիւնը կը տպուի շնորհել Արժ. Տիմոթէոս վարդապետը ։ Նոյնպէս տուած էր նաև ՚ի Ճիտուէ Ամէրիկեան Անծ. Տօքթոր Պրանկուլի եֆէնտիին ըստ նորին խնդրանաց ։

Աղեքսանդրիայէն մեկնելով հասան ՚ի Յոպպէ ։ ուր շաբաթ մի յառաջ Ամեն. Սրբազան Պատրիարքը սուրբ Աթոռոյս Թարգման Արժ. Սամուէլ վարդապետն ու Արժ. Եղիկիէլ վարդապետը խրկած էր ՚ի պատիւ նոցա ։ Հոն ևս ինչպէս արժան է, թէ ազգայնոց և թէ օտարազգի հասարակութեան գլխաւորաց կողմէ ջերմ ընդունելութիւն գտնելով հետևեալ օրը ճանապարհ կ՚ելնեն ։ Քաղաքին մէջ անմիջապէս պատրաստուեցաւ Գեր. Հարց ձիաւորաց գալուստը ։ հասարակութենէն բազմաթիւ անձինք փութացին դէմ ընդ առաջ մինչև ՚ի Կալանիա բռնած կամուրջը ։ Նոյնպէս և Ամեն. Սրբազան Պատրիարքը իւր և Միաբանութեան կողմէն ընդառաջ խրկած էր զԳեր. Կարապետ և զՄիմէոն եպիսկոպոս սրբազան հայրերը հանդերձ քանի մի վարդապետօք և միաբանօք ։ Նոյնպէս Անգղիոյ Հիւպատոսը իւր կողմէն թարգմանն ու երկու խաւասները խրկած էր ձիաւորեալ, իսկ Յունաց կողմէն թարգմանին երկրորդը ։

Այս օրինակ հանդէսով մտան ՚ի սուրբ քաղաքն ՚ի ձայն զանգակաց մինչև ՚ի վանս, և ապա եկեղեցականք թափօրիւ մտան ՚ի սուրբ եկեղեցին, ուր հանդէսն թէ ողջոյն Միաբանութեան և թէ նոյին Գերապատուութեան պատերը կը բաբախէին փոխադարձ քաղցր գորովով ու հոգևոր ուրախութեամբ ։ Հոն իրենց գոհաբանական աղօթքն և ուխտերնին կատարելէն զկնի, իւրաքանչիւր հարց և եղբարց հետ ողջագուրելով և սուրբ համբոյրիւ զիրար գրկելով պատշաճ տեսարան մի կը ներկայացնէին ։ Այն միջոցին Ամեն. Սրբազան Պատրիարքը իւր վեհարանին մէջ կըսպասէր զիրենք ընդունելու ։ ուր դպրաց քաղցրաձայն երգերովը և բոլոր Միաբանութեան և ՚ի պատիւ եկող հիւրերուն ընկերութեամբ եկան ։ Հոն սրբազան Հայրը դէմ ընդառաջ գալով և Գեր. սուրբ Հարց վիզէն պլլուելով և ուրախութեան ու գորովոյ քաղցր արտասուքներ հոսելով զիրար համբուրեցին ։ ու ապա տարաւ զիրենք պատրիարքարանի ընդունարան սրահը, ուր ՚ի պատիւ և յուրախութիւն երջանիկ դարձին Գեր. Հարց երկու ճառ կարդացուեցան ժառանգաւոր Մարկոսեան աշակերտներէն մին արձակ և միւսն ոտանաւոր ։ Նոյնպէս Ամեն. Սրբազան Պատրիարքը իւր գոհութիւնը և շնորհակալութիւնը յայտնելով վերջացաւ ընդունելութեան պատշաճ հանդէսը ։ Զոր և կը փութանք Սիօնի միջոցաւ ընդհանուր ազգին ևս հաղորդելով նոյն ուրախութիւնը ու պատիւ դիւրութիւնը պարգևել ։ Աւելորդ չենք համարիր նմանապէս զետեղել այս տեղ Մարկոսեան ժառանգաւորաց կարդացած արձակ և չափաւոր ուղերձները ։

## ԳԵՐԱՊԱՏԻՒ ՏԵԱՌՆ.

Այսօր ամէն Հայ երախտագէտ սիրտ՝ ուրախութեամբ անդրադարձ ցայլցուած մը կը նուիրէ ազգասէր եւ անձնուէր Հարցդ, որոց պատկառելի տեւողութենէն երկար ժամանակ մը

կուած՝ և գրեթէ զՁեզ մերատին չը տեսնելու չափ յուսահատութեան ա-նուրջ ծիրաններուն մխուած, մինչ-դեռ կսկծագին կը հառաչէր. և մի-անգամայն յուսոյ արագասլաց թեւե-րով Ձերդ Գերապատուութեանց ա-ջամբ պալատեան համար ամենակա-րող Սուլթանին ոսկեզերաստ գահը կը բարձրանար ջերմագին պաղատանքներ մատուցանելու. Ահա յանկարծ կը տեսնէ զՁեր Գերապատուութիւնդ երկնային ամենազօր հրեշտակին ա-ռաջնորդութեամբ եկեալ հասեալ 'ի գոգն Սիոնի մօրն անարատ. ուստի այն՝ որ քանի մը օր առաջ ծանրաթա-խիծ կացութեան մը մէջ բարեբար յուսոյ եւ անգութ անյուսութեան զգացմանց իրեն ներշնչած այլայլու-թիւնը փոփոխակի իւր երեսին վրայ նկարելով չարաչար կը տագնապէր, այսօր միայն իրեն թագադման հանդի-սայնելով կը գոչէ անոր լեզուին մի-ջոցաւ. «Այս ուրախութիւն որ իմս է, լցեալ է», Յովհաննու մարգարէի բացագանչութիւնը իրեն յարմար դա-տելով. Այս չափս բաւական է, Գերա-պատիւ Հայր, մեր սրտին մինչ ցարդ կրածները յայտնելու և այժմեան ու-նեցած անբաղդատելի ցնծութեան և բերկրութեան մեր վրայ ըրած առատու-թիւնները Ձեզ՝ հայրենանուէր և 'ի մեր ազգին մահու չափ քիրտն թափող Հարցդ ներկայացնելու համար. Թոյլ տուք ուրեմն ինձ այժմ բարձրացու-նելու իմ ձայնս առ կատարիչն մեր խնդրուածոց առ բարեգութ Աստ-ուածն ամենից, 'ի ձօնելու անոր մեր այժմեան ունեցած գոհ սրտէն բղխած անբիծ և անխաբեղծ օրհնութիւննե-րը և միանգամայն Ձեր պատուական կենաց համար մաղթելու, ինչ որ արդէն մեր սիրտը կ'ըղձայ.

Ո՜վ անհուն ողորմածիս միակ Տէր և Սուլթան, զայն՝ որ քու ամենատես ակամբդ ամենայն ինչ կը դիտես, զայն՝ որ ծովու անհեղասատ ալեաց բռնութեան մատնուած խեղճ արարա-ծոյն օգնական ես, զայն՝ որ յամայի վրայ ամբարշտին բռնութեան մատնու-ած խեղճն և անոր ձեռակերտից ձեռն կը կորզանես, զայն՝ որ մարդագոռ հը-րապարակին մէջ անիրաւին ահարկու՝ և արդարութեան համար պատերազմո-ղին նիզակակից ես, զայն՝ ինչպէս որ նախախնամական բարձր բազկաւդ բարեհաճեցար ծովու սպառնալիքնե-րէն և յամայի երկարատեւ և մահա-բեր տառապանքներէն փրկելու այս երկու ծառայներդ, հաճէ՛ ես այսու-հետեւ պահել զանոնք 'ի խնամս քու ներքոյ գթութեանդ, տուր նոցա խոն-ջեալ անդամոց կատարեալ հանգստու-թիւն, փարատելով անոնց կատարած այս ներկայ չնաշխարհիկ և սատարու-ծահաճոյ աշխատութիւնը, պարգեւե-լով առատ անոնց կենաց բարօրութիւն մինչեւ ցմահ . . . և արժանացուցա-նելով զանոնք և անդ քուկին անպատ-բարեաց. յաւիտենական փառացդ և լուսափայլ տեսութեանդ, որ փափա-քելին, սպասելին և ցանկալին է ամե-նայն մահկանացուաց և անմահից. Ա

Ո՜վ, քեզ կ'օրհնեմք Սուրբ Աստ-ուած, զքեզ կը փառաւորեմք երախ-տագէտ սրտիւ քու չնչին և միանգա-մայն քեզ հաճելի արարածներս, այժմ քու բարերար մարդասիրութեանդ կը խնդրեմք Տէր, պահպանել ամենայնի յաջողութիւն ամեն օրհնուածս ձեռ-նարկութեանց Հայ ազգիս 'ի փառս անուան քո.

Մ. Ա. Տէր Աւետիքեան

14 Օգոստոս Տէրկարապետեան · Ե. Վարժ
1869 ամի. Աշակերտն

digitised by A.R.A.R.@